Արձակ, Պատմվածք, Հայ գրականություն

16+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՏԱՏՅԱՆԱ ԴՄԻՏՐԻԵՎԱ ՇԻՐԻՆԱ

Անհյուրընկալ է հյուսիսի անտառը: Թե՞ գուցե նրա համար էր այդպես թվում կալանավորներին, որ դա նրանց տառապանքների վայրն էր: Բայց ի՞նչպես կարող էր թվալ, երբ իրոք, գնում էիր անտառով, գնում, գնում քո բրիգադի հետ, և քեզ չէր հանդիպում ո՛չ մի գազան, ո՛չ մի կենդանի, ո՛չ մի թռչուն: Չէր կարելի ասել նույնիսկ, թե նրանք կային, բայց, խուսափելով քեզանից, թաքնվում էին նախապես: Ոչ, նրանք չկային: Ճանապարհի մի տեղում վարսակ էր թափված: Շաբաթներ շարունակ դա իր տեղումն էր, ոչ ոք չէր կտցահարում քո բացակայությամբ...

Եվ չկային այնտեղ գույներ: Ամենուր տիրապետում էր կանաչը: Իսկ եթե բացառիկ տեղերում հանդիպում էին ծառեր՝ հաղարջի նարնջագույն դառը պտուղներով, ապա դրանք անզոր էին գունազարդելու անտառի անսահման կանաչությունը և, ընդհակառակը, ավելի էին ընդգծում այն: Մասուրի վարդագույն թերթերով թփերը նույնպես կանգնած էին լինում խմբովին և ոչ թե անտառով մեկ ցանցված, և նման պատահական ընդմիջման, համարյա թյուրիմացության:

Չկային բույրեր: Միակ բույրը՝ դա անտառի ընդհանուր բույրն էր, որն ուներ մի քանի տարբերակներ . — ճահճի բույրը, խոնավության բույր, չորության բույր: Գուցե միայն մի կամ երկու անգամ ամբողջ ամառվա ընթացքում դու առնեիր ծաղկայինմեղրային այն բույրը, որն արձակում էին ելակի աննկատելի թփերը՝ անտառի եզրին: Բայց դրանք ևս, չափից դուրս սակավ էին և իրենց հազիվ որսալի նրբությամբ նման էին ոչ թե իսկական բույրի, այլ հին հուշի:

Չկային համեր: Այլ կերպ ասած, ուտելու ոչինչ չկար անտառում: Սունկեր, մորի, լորամրգի, ուրիշ հատապտուղներ՝ այնքան հազվադեպ էին այնտեղ, որ հիշատակել դրանք՝ կնշանակեր անհիմն կերպով բազմազանացնել հյուսիսային անտառի միապաղաղ և անհյուրընկալ պատկերը:

Գեղեցկությո՞ւն: Գուցե և, իրոք, նա ուներ իր գեղեցկությունը՝ մեծ, փառահեղ, միաձույլ, բայց այդ արդեն անկարող էին ընկալել կալանավորները:

Այն ճամբարը, որի մոտ ապրում էր Տատյանա Դմիտրիևնա Շիրինան, գտնվում էր հենց այդպիսի միապաղաղ և անհյուրընկալ անտառում: Ճամբարի և ազատ աշխատողների տնակների շուրջը կար մի փոքրիկ բացատ, ավելի շուտ՝ անտառի անելանելի շուրջկալ: Այդ շուրջկալի մեջ, նույնքան միապաղաղ և անհյուրընկալ, կանգնել էր ճամբարի «զոնան»՝ փայտաշեն խուլ բերդի պես: Բայց դա մի բերդ էր, որի ոչ թե մուտքն էր արգելված, այլ ելքը:

Ազատ աշխատողների տնակները, ճամբարի շուրջը այս կամ այն կողմում շաղ եկած, նույնքան միագույն էին և գորշ, կառուցված առանց որևէ գեղեցկության, առանց գույների ու ձևերի, միայն և միայն նրա համար, որ մարդիկ պատսպարվեին դրանց մեջ:

Ազատ մարդկանց սպասարկող խանութում անգամ, չկային ոչ գույներ, ոչ բույրեր։ Աղքատիկ խանութ, որտեղ միակ բույրը վատ թխված սև հացի և լվացքի չչորացած օճառի համախառն հոտն էր։ Դաղձի կոնֆետների խիստ գունատ կանաչ պիտակները ոչ միայն չէին մտցնում այդտեղ ոչ մի գունագեղություն, այլև կարծես անտառի կանաչության թույլ անդրադարձումը լինեին:

Ահա անտառի ու ճամբարի, տնակների ու խանութի այդ միապաղաղության և անձկության, անհյուրընկալության և աղքատության միջով, իբրև իսկական կյանքի սքանչելի տեսիլ, կաքավաքայլ անցնում էր Տատյանա Դմիտրեիևնա Շիրինան և գնում իր աշխատավայրը՝ խանութ:

Տատյանան, ամենից առաջ, գեղեցիկ կին էր, շատ գեղեցիկ։ Հազիվ քսանչորսքսանհինգ տարեկան, նա մեծամարմին էր, փարթամ, լայն։ Նրա մարմինն սպիտակ էր՝ լավ սնված կնոջ լիքը սպիտակությամբ։ Նրա ոտքերը, ձեռքերը, կուրծքը, աչքերը, բերանը,— ամեն ինչ մեծ էր, բայց չէր թվում մեծ, որովհետև նուրբ էր և համաչափ:

Երկինքը թխպոտ ու գորշ էր այդ կողմերում։ Գորշ էր նույնիսկ այն ժամանակ, երբ թխպոտ չէր։ Ճամբարի բացատից զանազան հեռավորությունների վրա գտնվում էին դանդաղասահ մի գետ և անշարժ լճակներ։ Դրանք էլ էին գորշ թե ինքնին և թե նրա համար, որ իրենց մեջ անդրադարձնում էին գորշ երկինքը:

Միակ վճիտ կապտությունը հարյուրավոր կիլոմետրերի վրա՝ դա Տատյանա Դմիտրիևնա Շիրինայի աչքերն էին, ոչ մանկականորեն միամիտ, ոչ կանացիորեն խորամանկ, այլ աղջկավարի պարզ ու հստակ:

Օրվա լույսն այդ կողմերում ընկնում էր ոչ թե արևի ոսկեգույներով, այլ ինչպես ոչ շատ սպիտակ ալյուրի նոսր փոշի, որը որքան որ լուսավորում, այնքան էլ մշուշում էր առարկաները:

Միակ շլացուցիչ լույսը հարյուրավոր կիլոմետրերի վրա՝ դա Տատյանա Դմիտրիևնա Շիրինայի մազերի ոսկե խուրձն էր՝ շրջապատի գորշության մեջ շռայլորեն բռնկված:

Տատյանան միշտ հագնում էր թավշե հագուստներ՝ բորդո, կապույտ, կարմիր գույների։ Բայց մինչև անգամ երբ կանաչագույն էր լինում նրա հագուստը, այն չէր ձուլվում անտառի գույնին։ Ուրիշ էր նրա թավշի կանաչը, տարբեր էր անտառից՝ այնքան, որքան որ բոլոր մյուս գույները։ Շուրջն ամեն ինչ էժան էր և աղքատիկ, իսկ Տատյանա Դմիտրիևնա Շիրինան, թե՛ ինքը և թե՛ հագուստները, միակ թանկը, հարուստն ու շքեղն էր հարյուրավոր կիլոմետրերի վրա։ Գուցե աշխարհում նա թողներ թեկուզև շատ լավ, բայց սովորական տպավորություն։ Գուցե։ Բայց այդտեղ նա նման էր երկնքից իջած էակի:

Տատյանան խոսում էր գեր կնոջը հատուկ հանդարտ և այնպիսի տաք ձայնով, որ ջերմացնում էր ոչ միայն հոգիդ, այլև մարմինդ՝ ոտից գլուխ:

Հպարտ կին չէր Տատյանան, նրա հետ կարող էին խոսել բոլորը, մինչև իսկ կալանավորները։ Բայց վերջիններս չէին համարձակվում խոսել՝ չմերձեցնելու համար իրենց թշվառությունն ու տգեղությունը նրա փարթամ շքեղությանը։ Հեռվից էին հիանում նրանով, ինչպես հիանում ես, երբ մուգ ամպերի մի փոքրիկ բացվածքից հանկարծ երևում է արևը:

Կալանավոր Հարությունյանը երջանկություն էր համարում այն, որ ապրում է այդ ճամբարում և երբեմներբեմն, ոչ ամեն օր, տեսնում է Տատյանա Դմիտրիևնա Շիրինային:

Ոչ մի ցանկություն չէր փոթորկում ինչպես բոլորի, այնպես էլ նրա սիրտը։ Ո՞ր խելագարը կարող է իրական ցանկություն ունենալ արևը բռնելու։ Ջերմանում ես դրա շողերի տակ. — դրա համար է արևը:

Հարությունյանին անարդար էր թվում, որ Տատյանան նույնպես, բոլոր մյուս մարդկանց նման, քայլում էր այդ հավիտյան խոնավ գետնի վրա՝ իր մեծ, բայց նուրբ կիսակոշիկների խոր հետքերը դրոշմելով այնտեղ։ Անարդար էր համարում, որ նա, կռացնելով իր ոսկե գլուխը, մտնում էր գորշ տնակներից մեկի շեմքից ներս՝ իր բնակարանը: Անարադար էր համարում, որ նա աշխատում էր սև հացի, լվացքի չչորացած օճառի և դաղձի կոնֆետների գունատ կանաչ պիտակների միջև՝ փոխանակ ապակիների ու նիկելի մեջ շողշողացող փառահեղ մագազինի՝ բազմագույն պիտակներով, տուփերով, արկղիկներով, վաճառասեղաններով, լի ճոխ բազմությամբ...

Մի օր, երբ Հարությունյանը, արդեն «անցագրավոր» կալանավոր, առանց պահակի գնում էր իր աշխատանքին՝ պահակելու կարտոֆիլի դաշտը, տեսավ դիմացից եկող Տատյանա Դմիտրիևնա Շիրինային։ Նրա սիրտն սկսեց խփել, որովհետև նա երբեք այդքան մոտիկից չէր տեսել նրան՝ իր և մյուս բոլորի հիացմունքի առարկային:

Երբ կինը հավասարվեց գջլոտված հագուստներով և վաղուց չածիլված կալանավորին, սա ասաց.

— Տատյանա Դմիտրիևնա...

Կինը կանգ առավ, նայեց կալանավորին՝ առանց սառնության, առանց ջերմության, բայց նաև առանց անտարբերության, այլ բարի մարդու պատրաստակամությամբ:

— Հեռացեք այստեղից, Տատյանա Դմիտրիևնա,— խնդրեց Հարությունյանը։— Դուք այս աշխարհից չեք, ի՞նչ գործ ունեք այստեղ։ Հեռացեք...

Տատյանան, որ բազում անգամներ էր լսել ազատ մարդկանց խնդիրը՝ «երևացեք ավելի հաճախ, հաճելի է ձեզ տեսնելը», բազում անգամներ էր նույնը կարդացել կալանավորների անխոս հայացքներում, և վարժվել դրան, թունդ ելավ ամբողջովին, զգալով որ ոչ ոք, դեռ ոչ ոք չի ասել նրան այդպիսի ջերմ խոսք։ Նա նայեց պատառոտված ու չածիլված կալանավորին, կնոջ խորաթափանց հայացքով տեսավ պաշտամունքից երկյուղած տղամարդուն՝ այդ կեղևի տակ, և վար ընկավ նաև նրա կեղևը՝ բար իպատրաստակամությունը։ Ասաց ինչպես կինը՝ տղամարդուն.

— Շնորհակալություն...

Եվ գնաց վաճառելու իր դաղձի կոնֆետները:

Հարությունյանի և Շիրինայի միջև սկսվեց լուռ և անշարժ բարեկամություն։ Լուռ՝ որովհետև այլևս ոչ մի խոսք չէին ասում նրանք միմյանց, և անշարժ՝ որովհետև նրանցից ոչ մեկը չէր էլ կատարում գոնե մի քիչ ավելի մերձավոր բարեկամություն հաստատելու որևէ փորձ։ Երբ պատահաբար հանդիպում էին միմյանց, ապա միայն ժպտում էին և անցնում։ Նրանց

հայացքները հանդիպում էին իրար և ամեն անգամ Հարությունյանը հայացքով կրկնում էր իր աղերսը.

— Հեռացեք այստեղից, Տատյանա Դմիտրիևնա...

Եվ կինը հայացքով շնորհակալություն էր հայտնում նրան այն անշահախնդիր և անձնազոհ պաշտամունքի համար, որ կարդում էր կալանավորի հայացքի լուռ խոսքերի մեջ: Այնքան հիանալ կնոջով, որ չուզենալ տեսնել նրան... Որովհետև տեսնել՝ կնշանակեր, որ նա մնար այս գորշ հյուսիսում...

Մի անգամ, երբ Հարությունյանը սովորականի պես ուզում էր անցնել նրա մոտով, Շիրինան շշնջաց.

— Մի քանի րոպե հետո եկեք խանութ... Մի անհանգստանաք, ոչ ոք չի լինի այնտեղ...

Հարությունյանի գլուխը պտտվեց այնպես, ինչպես դա լինում է, երբ ավարտում ես աշխատանքային ծանր օրը և դեռ չես ստացել քո մի շերեփ ընթրիքը: Համարյա վազքով նա անցավ հեռու, կարծես շտապեցնելով ընթացքն այն րոպեների, որոնցից հետո նա պիտի գնար Տատյանայի մոտ և խոսեր նրա հետ՝ մենակության մեջ:

Երբ վերջապես նա մտավ խանութ, իրոք որ, ոչ ոք չկար այնտեղ, Տատյանան մենակ էր:

— Դուռը ծածկիր...— շշնջաց կինը:

Վերցնելով մեծ դանակը, նա կտրեց մի խոշոր կտոր հաց, մեկնեց կալանավորին.

— Թաքցրու...

Հարությունյանը մեքենաբար վերցրեց հացը, որովհետև հաց վերցնելը կալանավորի մոտ դարձել էր գիտակցությունից անկախ, բնազդային շարժում: Վերցրեց և դուրս նետվեց խանութից...

Հասնելով իր աշխատանքի վայրը՝ կարտոֆիլի դաշտում, նա հացը դրեց մի կոճղի վրա և հեռացավ: Թող ուտեն գազանները, կենդանիները, թռչունները, կամ թող մնա այնտեղ շաբաթներով՝ ինչպես թափված վարսակը՝ ճանապարհի վրա...

Հեռանալով հացից այնքան, որ չգայթակղվի և չվերցնի, նա նստեց և առաջին անգամ իր կալանավորության ութ տարիների ընթացքում՝ անձայն արտասվեց:

Բայց նա վշտացած չէր Տատյանայից: Այդ պարագաներում ուրիշ ամեն մի բարի մարդ նույն կերպ պիտի վարվեր սոված կալանավորի հետ: Ոչ, նա վշտացած չէր:

Եվ իզուր: Կանայք, սիրելի կանայք, գեղեցիկ, շքեղ կանայք, եթե սովամահ վիճակումն էլ տեսնեք տղամարդուն՝ մի պարգևեք նրան մի կտոր հաց՝ եթե դրանից առաջ պարգևել եք ամբողջ աշխարհը...